[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
27	Դեկտեմբեր	2018 թ.		Ա	0194312965
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
27	Դեկտեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծանոթագրություն)	Միավորի գին	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	50157618 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Հարկ վճարող PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

27/12/2018 10:22:51

ՈՐՈՇՈՒՄ
Դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

,, 29 ,, հոկտեմբերի 2018թվական

ք.Սևան

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ արդարադատության երրորդ դասի դասի խորհրդական Հ.Մարտիրոսյանս քննարկելով թիվ 50157618 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԳԴ4/2029/02/17 քաղաքացիական գործով 27.02.2018թ. կնքված հաշտության համաձայնագրով երեխայի մոր կողմից ծնողական իրավունքների և պարտականությունների իրագործման համար սահմանված ժամանակացույցի համաձայն՝ Գայանե Միհրանի Սանեյանին հնարավորություն է ընձեռնվել նախկին ամուսնու՝ Վարդան Վալերիկի Սանեյանի հետ բնակվող՝ 2008թ. հոկտեմբերի 7-ին ծնված անչափահաս Վալերի Վարդանի Սարիբեկյանի հետ անարգել հաղորդակցվել հեռախոսակապի կամ էլեկտրոնային կապի միջոցներով, դպրոցական ամառային արձակուրդների ընթացքում՝ յուրաքանչյուր տարի՝ սկսած հուլիսի 1-ից մինչև հուլիսի 31-ը ներառյալ, բնակվել իր բնակարանում՝ անընդմեջ գիշերակացով, առանց ՀՀ սահմանները լքելու հնարավորության, սակայն, Վարդան Սարիբեկյանի և վերջինիս ընտանիքի անդամների կողմից անչափահաս Վալերի Սարիբեկյանի նկատմամբ նախապես գործադրված հոգեբանական ճնշման, ուղղորդման, ինչպես նաև մոր՝ Գայանե Սանեյանի հասցեին որդու ներկայությամբ թույլ տրված բացասական արտահայտությունների արդյունքում ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնում հարուցված թիվ 04246371 կատարողական վարույթի ընթացքում՝ 2018թ. հուլիսի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում, երեք անգամ Գայանե Սանեյանը զրկվել է իր որդուն՝ Վալերի Սարիբեկյանին տեսակցելու, հաղորդակցվելու և իր բնակության վայր տեղափոխելու հնարավորությունից, որն արտահայտվել է անչափահասի կողմից մոր նկատմամբ ցուցադրված բացահայտ անհանդուրժողականությամբ

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Սևանի բաժնում հետաքննության մարմնի 167.1-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 50157618 քրեական գործը,որի նախաքննությունը շարունակվում է Սևանի քննչական բաժնում:

Քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ Սևան քաղաքի բնակիչ Վարդան Վալերի Սարիբեկյանը և Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի բնակիչ Գայանե Միհրանի Սանեյանը ամուսնացել են 2007թվականին: Ամուսնանալուց հետո Գայանե Սանեյանը և Վարդան Սարիբեկանը համատեղ ապրել են ամուսնու ընտանիքի անդամների հետ միասին:Համատեղ ամուսնության ընթացքում 07.10.2018թվականին ծնվել է Գայանե Սանեյանի և Վարդան Սարիբեկյանի որդին՝ Վալերի Վարդանի Սարիբեկյանը:2016թվականի ամռանը Վարդան Սարիբեկյանի կողմից ՌԴ-ում արտագնա աշխատանքների մեջ գտնվելու ժամանակ Գայանե Սանեյանը ամուսնու հետ ընտանեկան կյանքում ունեցած ամուսնական կենցաղային հարցերի պատճառով ամուսնալուծվել է Վարդան Սարիբեկյանից և որդուն՝ Վալերի Սարիբեկյանին թողնելով ամուսնու հարազատների մոտ իր ծնողների հետ մեկնել ՌԴ:

Գայանե Սանեյանի ՀՀ-ից մեկնելուց հետո, վերջինս ՌԴ-ից համապատասխան լիազորագիր է ուղարկել Հայաստանի Հանրապետությունում ՀՀ փաստաբանական գործունեությամբ զբաղվող փաստաբան Լևոն Թորոսյանին, ով իր անունից համապատասխան քաղաքացիական հայց է ներկայացրել դատարան իրենց ամուսնալուծվելու վերաբերյալ և ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԳԴ4/2029/02/17 քաղաքացիական գործով 27.02.2018թ. կնքված հաշտության համաձայնագրով երեխայի մոր կողմից ծնողական իրավունքների և պարտականությունների իրագործման համար սահմանված ժամանակացույց է սահմանվել, համաձայն որի կողմերը համաձայնվել են , որ Գայանե Սանեյանը անարգել կարող է Վալերի Սարիբեկյանի հետ

հաղորդակցվել հեռախոսային կամ էլեկտրոնային կապի միջոցներով,երեխային դպրոցական արձակուրդների ընթացքում՝ յուրաքանչյուր տարի սկսած հուլիսի 1-ից մինչև 31-ը ներառյալ Գայանե Սանեյանը իրավունք է ունեցել երեխային վերցնել հոր բնակության վայրից և անընդմեջ գիշերակացով բնակվել Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի 4-րդ փողոցի տուն 2 հասցեում՝ առանց ՀՀ սահմանը լքելու: Միաժամանակ այդ հաշտության համաձայնագրով սահմանվել է, որ պայմանավորված երեխայի սպորտային նախասիրություններով, երեխայի մոր հետ բնակվելու այդ ժամանակահատվածում Վարդան Սարիբեկյանը իրավունք է ունեցել երեխայի կողմից պարապունքներին մասնակցելու համար, երեխային վերցնել Գայանե Սանեյանի բնակության վայրից տեղափոխել մարզումների, որից հետո երեխային վերադարձնել մոր բնակության վայր:Նշված հաշտության համաձայնությամբ կողմերը պարտավորվել են որևէ կերպ չխոչընդոտել համաձայնությամբ սահմանված միմյանց իրավունքների և պարտականությունների իրացմանը:

Հաշտության համաձայնության կնքումից հետո Գայանե Սանեյանը կրկին մեկնել է ՌԴ ի ծնողների մոտ: ՌԴ-ում գտնվելու ժամանակ Գայանե Սանեյանը փորձել է կապ հաստատել որդու՝ Վալերի Սարիբեկյանի հետ,սակայն վերջինիս չի ցանկացել մոր հետ որևէ տեսակի կապ հաստատել և մորը իրեն լքելու և ՀՀ-ից միայնակ ՌԴ մեկնելու պատճառով մոր նկատմամբ ատելությամբ է լցվել:

Հաշտության համաձայնությամբ սահմանված՝ երեխայի դպրոցական արձակուրդների ընթացքում՝ յուրաքանչյուր տարի սկսած հուլիսի 1-ից մինչև 31-ը ներառյալ Գայանե Սանեյանի կողմից երեխային հոր բնակության վայրից վերցնելու և անընդմեջ գիշերակացով Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի 4-րդ փողոցի տուն 2 հասցեում՝ առանց ՀՀ սահմանը լքելու երեխայի հետ բնակվելու իր իրավունքը իրագործելու նպատակով էլ , երբ Գայանե Սանեյանը վերադարձել է ՀՀ և Սևանի ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների, Սևանի և Ծովագյուղ համայնքների երեխաների խնամակալության և հոգաբարձության մարմնի աշխատակիցների հետ 2018թվականի հուլիս ամսին 3 և ավելի անգամ այցելել է Վալերի Սարիբեկյանի բնակության վայր և ցանկացել երեխայի հետ շփվել, վերջինիս իր բնակության վայր տեղափոխել ՝ Վալերի Սարիբեկյանը հուզվել է, մոր հետ չի ցանկացել որևէ տեսակի կապ հաստատել և նրա հետ որևէ վայր չի մեկնել:

Գործով նախաքննության ընթացքում ըստ կատարողական վարույթի շրջանակներում այդ այցելությունների ժամանակ գտնված անձանց ցուցմունքների գործով նախաքննությամբ պարզվել է,որ Գայանե Սանեյանի կողմից իր երեխային վերջինիս բնակության վայրում տեսակցելու և իր բնակության վայր տեղափոխելու ցանկություն ունենալու ժամանակ Վարդան Սարիբեկյանը և վերջինիս ընտանիքի անդամները որևէ գործողությամբ խոչընդոտներ չեն ստեղծել երեխայի տեղափոխման հարցում և միայն այդ տեղափոխումը չի իրականացվել երեխայի ցանկության բացակայության պատճառներով:

Գործով նախաքննությամբ պարզվել է,որ անչափահաս Վարելի Սարիբեկյանի կողմից ծնողների ամուսնալուծությունից հետո, երեխայի հոր ընտանիքում բնակվելու ժամանակահատվածում երեխայի մոտ մոր՝ Գայանե Սանեյանի նկատմամբ ատելություն է առաջացել ,որով էլ պայմանավորված երեխան չի ցանկանում մոր հետ բնակության համար վերջինիս բնակության վայր տեղափոխվել:

Նախաքննության ընթացքում անչափահաս Վալերի Սարիբեկյանը հայտնել է,որ ինքն իր ցանկությամբ չի ցանկացել մոր հետ նրա բնակության վայր տեղափոխվել,նրա հետ որևէ տեսակի կապ հաստատել և իր հոր և նրա ընտանիքի անդամների կողմից երբևէ որևէ տեսակի արգելքներ չեն եղել մոր հետ կապ ահստատելու համար և իր այդ ցանկության պատճառը միայն մոր կողմից իրեն լքելը և ՀՀ մեկնելն է հանդիսանում,որով էլ պայմանավորված ինքը մորը չի ներել և չի ներելու:

Գայանե Սանեյանը իր հարցաքննության ընթացքում հայտնել է,որ ըստ իրեն ամուսնու՝ Վարդան Սարիբեկյանի հարազատների կողմից հոգեբանական ճնշման է ենթարկվել իր անչափահաս երեխան, որով էլ պայնամավորված երեխան չի ցանկանում իրեն տեսնել, իր հետ զրուցել:

Նկատի ունենալով,որ քրեական գործով Վալերի Վարդանի Սարիբեկյանի հոգեվիճակը և գործով նախաքննությամբ պարզաբանման ենթակա մի շարք այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի մասնագիտական հատուկ գիտելիքներ,ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ , 243-244 հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1.Վարույթումս գտնվող թիվ 50157618 քրեական գործով նշանակել դատա-հոգեբանական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել ,,Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ,, հիմնադրամի բժշկական հոգեբանության ամբիոնի հոգեբան -փորձագետներին:

2.Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/Անչափահաս Վալերի Վարդանի Սարիբեկյանը ինչ հոգեվիճակում է գտնվում : Սարիբեկյանը գտնվում է արդյոք հոգեճնշված վիճակում, թե ոչ:

բ/ Եթե Վալերի Վարդանի Սարիբեկյանը գտնվում է հոգեճնշված վիճակում ,ապա վիճակը ինչ հանգամանքներում է առաջացել և որն է դրա պատճառը/ները/:

գ/ Հաշվի առնելով անչափահաս Վալերի Սարիբեկյանի հոգեկան զարգացման մակարդակը, կարող էր,արդյոք, նա լիովին գիտակցել իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել այդ գործողությունները:

դ/ Ինչ հանգամանքով /ներով / է պայմանավորված Վալերի Սարիբեկյանի կողմից իր մայր Գայանե Սանեյանի հետ տեսակցելուց հրաժարվելը:

Վալերիկ Սարիբեկյանը իր կամքով է հրաժարվում իր մոր հետ տեսակցելուց ,թե դա պայմանավորված է նրա հայր Վարդան Սարիբեկյանի կամ նրա մերձավոր ազգականներից որևէ մեկի կողմից դեռահասի նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրելու եղանակով խոչընտոտներ ստեղծելով :

Եթե դա պայմանավորված է Վարդան Սարիբեկյանի կամ նրա մերձավոր ազգականներից որևէ մեկի կողմից հոգեբանական ճնշում գործադրելու հանգամանքով,ապա կոնկրետ ինչում է դա արտահայտվել :

2.Փորձագետին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք, թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակության ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Փորձագետին պարզաբանել ՀՀ քր.դատ.օր.-ի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր.օր.-ի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

3..Փորձաքննվողը և քրեական գործի նյութերը կներկայացվեն համապատասխան միջնորդության հիման վրա:

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային
քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Հ.Հ.Մարտիրոսյան